

# ՄԱՅԻՍ 28Ի ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԻԷՆՆԱՅԻ ՄԷՁ

Այս տարի առաջին անգամ ըլլալով Վիեննայի մէջ ոգեկոչուեցաւ Հայաստանի Հանրապետութեան 63րդ ամեակը:

27 Մայիսին, Անկախութեան օրը ոգեկոչուեցաւ Հայ Ուսանողական եւ Երիտասարդական Միութեան կողմէ: Բեմին վրայ պարզուած էր Եռագոյնը: Իւրաքանչիւր աթոռի վրայ կը տեսնուէր Մուշեղ Իշխանի «Կարօտ Դրօշի» յօդուածը, ինչպէս նաեւ «Մեր Հայրենիք», «Յառաջ Նահատակ» երգերու բառերը:

Օրուան առաջին դասախօսն էր Տոկտ. Համբարձում Յարութիւնեան: Ան մանրամասն բացատրեց՝ Սարգարապատի, Բաշ Աբարանի եւ Հարաքիլիսէյի ճակատամարտերը: Ապա Օր. Մարօ Գալանան արտասանեց Վահան Թէքէեանի «Կենդանութիւն Հայրենի» բանաստեղծութիւնը:

Թերեւս շատեր զարմացան, երբ պատրաստուած երիտասարդներ երգեցին «Յառաջ Նահատակ»ը: Այո՛ շատեր առաջին անգամ կը լսէին կամաւորներու երգը...

Մայիս 28ի ոգեկոչումը կատարեց ընկ. Գրիգոր Հալահան: Ան իր խօսքին մէջ նշեց, թէ «... Հայաստան, որ մինչեւ 1918, Մայիս 28 միայն աշխարհագրական անունի մը վերածուած էր, անկա-

խութեան հռչակումով կը դառնար պետականութիւն... Խ. Հայաստանի շարունակութիւնն է Հայաստանի Հանրապետութեան, վերջիչենք Վեհափառ Վազգէն Ա. ի խօսքերը իր պատմական ճառին մէջ. 27 Մայիս 1979ին»... Մայիս 28ը եւ Նոյեմբեր 19ը ուղիղ գծով կը գտնուին պատմական զարգացման միեւնոյն ճանապարհին վրայ»: Ան փակեց իր խօսքը շեշտելով «... աններելի ոճիր է նորահաս սերունդներու աչքին նսեմացնել Մայիս 28ի սրբազան յաղթանակը»:

Հանդիսութիւնը վերջացաւ «Մեր Հայրենիք»ով:

Իսկ 28 Մայիսին Անկախութեան հանդիսութիւնը կը կատարէր Աւստրիոյ Եկեղեցական Հայ Համայնքի վարչութիւնը:

Ս. Հոռփսիմէ Եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ, Հոգեւոր Հովիւ Մեսրոպ Վրդ. Գրիգորեանի կողմէ, ի յիշատակ անոնց, որոնք նահատակուեցան Հայրենիքի Ազատութեան Համար:

Յետոյ ժողովուրդը հաւաքուեցաւ Մշակութային Սրահին մէջ: Ներկայ էին նաեւ Մխիթարեան Հայրեր, ինչպէս Աթոռակալ Հայր Օգոստինոս Վրդ. Սեֆուլեան: Որպէսզի ցոյց տրուի միասնականութեան ոգին, մանաւանդ Հայրենիք-Ըս-

փուռք ամուր կապը՝ բեմի ձախ կողմը գետեղուած էր Խ. Հայաստանի դրօշը, Աջին Եռագոյնը, մէջտեղ վերելք Վազգէն Ա. ի նկարը իսկ անոր տակը Թագմիկ Յարութիւնեանի մէկ գեղեցիկ ստեղծագործութիւնը, որ ցոյց կու տար Հայու միասնականութեան ոգին:

Ժողովուրդը յոտնկայս երգեց «Մեր Հայրենիք»ը: Օրուան յիշատակ մը կատարեց ընկ. Գ. Հալահան: Ան իր խօսքերը վերջացուց ըսելով «Իւրաքանչիւր Հայ պարտականութիւն ունի մը տածել եւ գործել ամբողջ Հայութեան Համար: Մենք պէտք է բոլորս միասին գործենք համայն Հայութեան համար. մէկ է Հայ ժողովուրդը, մէկ է Հայուն Հայրենիքը եւ մէկ է Հայ Դատը»:

Յետոյ խօսք առաւ ատենապետ Ա. Աստուածատուրեան: Ան խօսեցաւ մեր պարտականութիւններու մասին ապա հրահրեց մէկ մէկ բոլոր անոնք, որոնք վերջին շրջանին ծառայած էին Հայութեան եւ իւրաքանչիւրին յանձնեց շնորհակալութեան գիր մը:

Ապա տեղի ունեցաւ ընդունելութիւն մը, երգուեցաւ «Յառաջ Նահատակ» եւ ուրիշ ազգային յեղափոխական երգեր: Ժողովուրդը բաժնըւեցան գոհ եւ ի՛նչ հայ զգացումներով: